

նին¹⁵». Եւ Աւետարան մը ի խնդրոյ «Դիւ-
խիսցի (Տփիսիսցի) խոճայ մահտեսի Հովազե-
ղին¹⁶»: Իսկ յաջորդ տարին՝ 1624ին Աւե-
տիք եւ իր ուսուցիչն Իսրայէլ վարպետ կը
նկարագրողեն Վարդան Լեւոնացոյ օրինակած
Աւետարանը ի վայելուցն խոճայ Սանոսի¹⁷ :
Թուճա երէց, 1615ին կ'օրինակէ Ուր-
հայեցի Յովհաննէս արքեպիսկոպոսի համար
Առաքել Սիւնեցոյ Սահմանադրութիւնն դաս-
տիարակութեան «ընդ հովանեաւ Ս. Աստուա-
ծածնին եւ Ս. Քառասնիցն¹⁸» :

Ներսէս Սեբաստացի, որդի Կարապետի
եւ Սաթուհի, որ յետոյ Սոյ կաթողիկոսա-
կան աթոռը կը բարձրանայ, 1618ին, երբ
սարկաւազ էր տակաւին «կալով առ ոտն
տեսուն իմոյ տէր Յովհաննէս կաթողիկոսի»,
կ'օրինակէ Սաղմոսարան մը, զոր կը ծաղկէ
Մեկնութիւն Մովսէսի¹⁹ : Սոյն Սեբաստացի
Ներսէս 1633ին, երբ վարդապետ էր արզէն,
հոս ի Հալէպ կ'օրինակէ Գրիգոր Տաթևաց-
ոյ Մեկնութիւնն Մատթէի²⁰ :

Հայրապետ՝ Գեբէ կոչուած, 1623ին
կ'օրինակէ նոյնպէս Տաթևացոյ Մատթէի
Մեկնութիւնը «աստուածայնոց Կտակարանաց
տեղեակ եւ հմուտ» Աստուածատուր կրօնա-
ւորի համար²¹ : Նոյն Հայրապետ 1624ին, երբ
«դեռաբոյս» կը խոստովանի ինքզինքը, Ամ-
թեցի Սոնայ Մախոտի խնդրանքով կ'օրի-
նակէ Գործք առաքելոց եւ Նսայեայ մարգա-
րէութիւնը²² :

Գրիգոր Հռոմկլայեցի. ունինք իրմէ Սաղ-
մոսարան մը, զըրուած 1624ին²³ :

Նիկողայոս քահանայ, որ 1625ին օրինա-
կած է Սաղմոսարան մը²⁴ :

Բացի այս երկրացի գրիչներէն՝ գործած
են ի Հալէպ Ս. Աստուածածին եւ Ս. Քա-
ռասունք եկեղեցիներու հովանւոյն տակ
պատասպարուած՝ Վարդան եւ Մկրտիչ Լե-

¹⁵ Ձեռ. էջմ. Թ. 1767:
¹⁶ Բարխուդարեան, Արցախ, էջ 123:
¹⁷ Conybeare, A Catalogue of the armenian
Ms. in British Museum, էջ 40. տե՛ս վարդ:
¹⁸ Վիեննայի Միսիթարեան Մատ. Թ. 887, 94ր:
¹⁹ Թորգոմ եպ. Գուշակեան, Յուցակ հայերէն
ձեռագրաց Ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, Թ. 81:
²⁰ Հ. Աճառեան, Յուցակ հայերէն ձեռագրաց
Թաւրիզի, էջ 115:
²¹ Տ. եպ. Պալեան, Յուցակ հայերէն ձեռագրաց
Ս. Կարապետի վանուց ի Կեսարիա, Թ. 31 (անտիպ):
²² Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ հայերէն ձեռա-
գրաց Միսիթ. Մատ. ի Վիեննայի, Ա., էջ 834:
²³ Մ. Վ. Քէչիշեան, Յուցակ հայերէն ձեռա-
գրաց Ս. Աստուածածնի վանուց ի Չմառ, Թ. 221:
²⁴ Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, էջ 95:

հացիները, որոնք իբրեւ Երուսաղէմի ուխ-
տաւորներ հանդիպած են Հալէպ եւ ժամա-
նակ մը պանդխտած են հոն հայթայթելու
իրենց պարենն եւ ճանապարհածախքերը :

Վարդան Լեւոնացի կ'օրինակէ 1624ին Աւե-
տարան մը, զոր ապա կը ծաղկէ Ամթեցի
վարպետ Իսրայէլ «օղնականութեամբ դեռա-
բոյս Աւետիքին» եւ Սոնայ Սանոս կը ստա-
նայ ու կը նուիրէ Ս. Քառասնից եկեղեց-
ւոյն²⁵ :

Մկրտիչ Լեւոնացի կ'օրինակէ Սիւնեցոյ
էջլէպի յանձնարարութեամբ Հարանց վարք
մը 1625ին²⁶ եւ Ներսէս Շնորհաւոյ Ընդհան-
րական 1635ին²⁷ : Լեւոնացոյ կը պատահինք
1653ին յէջմիածին :

Գրչութեան արհեստին կից կը զարգա-
նար նաեւ մանրանկարչութեան արուեստը :
Սիմէոն Լեւոնացի 1616ին կը յիշէր թէ կար
Հալէպ «լաւ վարպետ մի» : Խօսքը առանց
տարակուսի տէր վասիլ վարպետի մասին է,
զոր 1604ին արզէն կը յիշէր Ղազար գպիր :
«զհոգեւոր հայր ուսուցիչն իմ գփաջ քարտու-
ղարն գվասիլ եպիսկոպոսն». իսկ 1619ին՝
«զուսուցիչքն իմ գտէր վասիլ վարպետն եւ
զՅակոբ քաջ քարտուղարն եւ որ բազում աշ-
խատութեամբ աշխատեցան. ի յուսուցանելն
զանարժանս²⁸» :

Կ'երեւայ թէ վարպետ եպիսկոպոսն Վա-
սիլ քաջուցաւ յետոյ հրապարակէն եւ անոր
տեղ հրաւիրուեցաւ Ամթեցի վարպետ Իս-
րայէլ : 1623ին, ինչպէս տեսանք, Աւետիք
գրիչ Մ. Ուրհայեցոյ Տարեգրութիւնը «Ի
Քառասունն Համթեցի վարպետ Իսրայէլ»
կ'օրինակէր. իսկ 1624ին վարպետ Իսրայէլ
«օղնութեամբ դեռաբոյս Աւետիքին» կը նկա-
րագրողէր Վարդան Լեւոնացոյ Աւետարանը :

Այս աշխոյժ գործունէութիւնը կը խամբի
ասկայն 1635էն ետքը, երբ Յովհաննէս Ուր-
հայեցի կը հեռանայ Հալէպէն եւ Գարակէօ-
ղեան ընտանիքի դէմքերը՝ Պետրոս, Սանոս
եւ Սքանդար էջլէպիները, որոնք զարդն էին
եւ պարծանքը քաղաքին, եւ պաշտպանը այդ
զպրատան, կա՛մ կը վախճանին եւ կա՛մ հրա-
ժեշտ կու տան հրապարակին :

²⁵ Conybeare, անդ :
²⁶ Ձեռ. Երուսաղէմի, Թ. 23. տե՛ս վարդ :
²⁷ Քէչիշեան, Յուցակ Չմառի, Թ. 296. տե՛ս
վարդ :
²⁸ Բազմավէպ, 1923, էջ 34:

4. ԳԱՐԱԿԵՕՐԵԱՆ ԱՅԳԱՏՈՂՄԸ

Հալէպի հին բնակիչներէն կ'երեւայ Գա-
րակէօղեան ընտանիքը : Մահտեսի Կիրակոս,
մականուանեալ «Ղարակոյ» եւ տիկին Վարդ-
նաթուն կը կազմէին այդ ազգատոհմին ան-
դամները Ժ. 2. դարու երկրորդ կէսին. որոնց
չառաւիղներն են 1. Պետրոս, կոչուած նաեւ
Պետիկ. 2. Սանոս. 3. Շաղուաք եւ 4. Սա-
նալ : Ունեցած է Կիրակոս նաեւ դուստրներ,
որոնց անունները անձանօթ կը մնան :
Հաւանօրէն վաճառական էր մահտեսի
Կիրակոս եւ վայելած իւր յաջորդութեամբը
համբաւ : Հօրը ձեռնտու օղնական կ'ըլլան
որդիք, որոնք իրենց ճարտիկութեամբ կ'ըն-
դարձակեն առեւտրական տունը. եւ նաեւ
երբեւ պետական պաշտօնեաներ երեւելի կը
հանդիսանան, նոյն իսկ ձեռք կը ձգեն
մաքսապետութիւնը, ոչ միայն Հալէպի այլ
եւ Կարնոյ : Մահտեսի Կիրակոսի որդիներէն
եւ կարնոյ՝ Պետրոս, Սանոս եւ Սահակ կը ներ-
կայանան «էջլէպի» տիրոջսով. Պետրոս եւ
Սանոս կը կոչուին նաեւ Իշխան, Սոնայ :
Առաջինը 1613ին արզէն կը տեսնուի բարձր
դերքի վրայ : Աւետիս կաթողիկոս, որ 1613
Ապրիլ 5ին ձեռնադրած էր Երուսաղէմ Գրի-
գոր Գանձակեցիին եպիսկոպոս, կը յայտա-
բարէ իր Կոնդակին մէջ¹, թէ ձեռնադրու-
թիւնը կատարած է ի մէջ այլոց «Հալպայ
թիւնը կատարած է ի մէջ այլոց Խաքունիմ
Խոջայ Պետրոսի մաւր վարդ տեղեկու-
վկայութեամբ» : Կը պակսին մեզի տեղեկու-
թիւններ Պր. Շաղաւաթի եւ Սահակ էջլէպի
մասին :

5. ԽՈՃԱՅ ՊԵՏՐՈՍ-ՊԵՏԻԿ ԶԵԼԵՊԻ

Մահտեսի Կիրակոսի անդրանիկ որդին
է Պետրոս, կոչուած նաեւ Պետիկ : 1632ին
Երուսաղէմ յիշատակարան մը կը յիշէ գրիչը :
Իշխան Պետրոս ինքն յորջորջի
եւ մաքսապետ վերածայնի :
Իր ընտանեաց եւ գաւազներու անունները
չեն յիշատակած ժամանակակիցները :
Առանց տարակուսի իր մեծ ընդունակու-
թիւններու եւ շահած բարի համբաւին հա-
մար կը կարգուի Պետիկ Հալէպ շահատա-
նին մաքսապետ : Իր գրաւած բարձր դերքը
չեղեցիկ նկարագրած է Սիմէոն Լեւոնացի, որ
տեսած է գրիչը 1616ին : Սիմէոն խօսելով
Ս. Քառասունք եկեղեցոյ նորոգութեան մա-
սին կը գրէ. «չինօղն էր Սոնայ Սանոս եղ-
բայր Սոնայ Պետիկին. զի էր Պետիկն մեծ
ոմն եւ երեւելի. զի որպէս փաշայ մի շըջը,
երեսուն, քառասուն եասախօյլ. ունէր ենկի-
չերիք, սրահիք. եւ ասին թէ քսան եւ չորս
դարամ ամալ ունի. կօմրուին, մուխթասի-
պութիւնն, սուպաշուքիւնն, խաներն, հա-
մամին եւ այլն ամենայն նորա ձեռքն էր» :
Այլուր խօսելով Սիմէոն Երուսաղէմի
ուխտաւորներու վերադարձի մասին, մանր
կը նկարագրէ թէ ինչպէս Սոնայ Պետիկ եւ
իւր եղբայրները եւ համօրէն քաղաքը առօք
եւ փառօք կ'ընդառաջեն ուխտաւորներուն,
եւ փառօք կ'ընդառաջեն ուխտաւորներուն,
որոնց թուին մէջ էր այս անգամ նաեւ Հո-
ղեւոր Տէրը : Լսենք ամբողջութեամբ, ինչ
որ կը գրէ մեր ուղեգիրը. ուսկից կարելի է
տեսնել նաեւ թէ ինչպէս սէր եւ յարգանք կը
տածէին Հալէպի բնակիչները հանդէպ Հայոց
կաթողիկոսի, առանց ազգի եւ դաւանանքի
խտրութեան :
«Իսկ յորժամ մեք ի Հալպայ մտանէաք՝
կէս աուր ճանապարհ դէմ մեզ երեկ Հայոց
ազգն, արք եւ կանայք, ծերք եւ տղայք, երի-
տասարդք եւ կուսանք, այլ եւ Ասորիք,
տասարդք եւ կուսանք, այլ եւ Ասորիք,
Մարունիք, նաեւ Թուրքաց. զի ա-
նորդիք, Մարունիք, նաեւ Թուրքաց. զի ա-
նորժամ յերուսաղէմայ ըխտաւորք
տաթ է յորժամ յերուսաղէմայ ըխտաւորք
զան, պիտոր դէմ գնան : Ապա զի Հոգեւոր
Տէրն ընդ մեզ էր եւ քաղաքին առաջնորդն,
վասն այն ստաւել պատիւ արարին. եւ քա-
ղաքն զյորդեցաւ : Այլ եւ Սոնայ Պետիկն եկաւ
ընդ եղբարք հեծեալ ի սպիտակ ձի ա-
նկուր եղբարք հեծեալ ի սպիտակ ձի ա-
նկուր. ոսկիակազմ ականակուր ընդելուզեալ
բալի. ոսկիակազմ ականակուր ընդելուզեալ
ախմբ եւ մեծագին մարգարտօք սանձն,
ախմբ եւ ախմբն. որ փայլաւայլի տայր ոս-
թամքն եւ ախմբն. որ փայլաւայլի տայր ոս-
թամքն եւ ախմբն եւ չափազանց զիպակաց
կին եւ ակունքն եւ չափազանց զիպակաց
պղպղուն եւ մեծածախ. ունէր ընդ իւր բա-
զում ճորտ եւ ծառայ, սիրահիք եւ ենկիչա-
զում որպէս փաշայ մի. եւ իբրեւ մերձեցաւ
ընդ որպէս փաշայ մի. եւ իբրեւ մերձեցաւ
նա՛ իջաւ ի ձիոյն եւ անկաւ յոտս կաթողի-
կոսին ողջունեաց զնա : Եւ իբրեւ նստաւ
կոսին ողջունեաց զնա քահանայիւք
եպիսկոպոսօք, վարդապետօք եւ քահանայիւք
եւ բազմամբոխ ժողովրդօք, որք եկեալ
եւ բազմամբոխ ժողովրդօք, որք եկեալ
եւ անտի դարձեալ առ ուխտաւորս եւ առ
եւ անտի դարձեալ առ ուխտաւորս եւ առ
ընդ ինքեանս բախի, զինի, կերակուր եւ
ընդ ինքեանս բախի, զինի, կերակուր եւ
այլն. եւ ուրախացեալ ընդ գարուստ նոցա
զրկախառն համբուրէին զմիմեանս եւ նրա-
տեալ ի ճաշ զուարճանային : Եւ ոչ ոք մնաց

¹ Համամճեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Գա-
րակոյ, Թ. 54, թղ. 136 ա-157 ա :

մեզի Յակոբ Կարնեցի³, որուն խօսքերը յառաջ կը բերեմ հոս ամբողջութեամբ:

«Դեռ եւս կայր ի մէջ բերդին եկեղեցի մի սաղաչէն գեղեցիկ: Սանոս չէլէպի ոմն բարեպաշտօն Հալպցի, եկեալ ի քաղաքս Ռ-ՀԸ (1629) թվին հրամանաւ սուլթան Մուրատ թագաւորին եւ վէզիրին իւրոյ Սոսրով փաշային, եղեւ մեծ մաքաւոր եւ կոմրուկչի Արզրուճայ քաղաքիս. եւ եղիտ չնորհս առաջի փաշաներաց. իւր հանձարեղ իմաստութեամբն եւ խոհեմութեամբն վարեաց զիշխանութիւն իւր որքան եկաց. զի տայր թագաւորին ճՌ զուռուչ, թո՛ղ զփաշային եւ իւր կարեացն. եւ առաւել այնչափ վարձք արար, որ Աստուած միայն գիտէ, զի մինչեւ հազար գերեոյ ազատութեան առիթ եղեւ ինքն, զի այն ժամանակն մեծ թուրքս այս մարտ մտեալ էր Պարսից. ՌԼԵ (1586) թվին ի վեր պատերազմէին եւ աւերէին գերկիրս մինչեւ ՌՁԹ թվին (1640): ... Եւ այս կողմանց բերդորէից պահապանքն ըստ իւրեանց յաջող ժամուն էլանէին ամենայն տարի բազում զօրօք եւ գնացեալ երկիրն Երեւանայ, Չօրսայ, Լօռու եւ Բամբակաճորու ասպատակէին... զկին եւ զողայսն գերի բերէին: Նմանապէս Պարսիկքն... Ապա յարոյց Աստուած ի ժամանակին այնմիկ... գերագանց Մովսէս կաթողիկոսն Ռ-ՀԹ թվին. զի ամենայն զօրվաթաւորաց հարկ զնէր որ զգերեալսն ազատէին... Վասն որոյ նոյն Սանոս չէլէպին եւ քաղաքի (Կարնոյ) զօրվաթաւորքն եւ վաճառականքն անչափ գերիս ազատէին եւ առաքէին ի տեղիս իւրեանց. որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի»:

Գրիգոր Դարանաղցի⁴ որ նոյնպէս կը խօսի այս գերեթափութեան մասին, Սանոսի մասնակցութիւնը կը յիշատակէ 1638ի թրքական արշաւանքներու առթիւ, երբ կ'ըսէ թէ Հայաստանէն ի Կարս եւ յԱրզրուճ բազմաթիւ գերիներ բերին. «Եւ Չաքարիա անուն վարդապետ մի էջմիածնեցի եւ Սանոս Չէլէպին՝ Պէտիկի եղբայրն Հալպպեցի, որ մաքսապետ եւ դարապիսանաճի գլուխ, օժանդակ լինելով եւ զօրավիգն եւ թափելով զամենայն գերեալսն ի գերողացն». այսինքն գերիները «բաժանեցին ի վերայ Արզրուճի տօրվաթաւորացն եւ վաճառականացն... ըստ

³ Յակոբ Կարնեցի, Տեղագիր վերին Հայոց, հրատ. Կ. Կոստանեանց, Վաղարշապատ 1903, էջ 32:
⁴ Ժամանակագրութիւն, էջ 580:

կարողութեան մարդկան, մինչ զամենեւեան աղատելով եւ ոչ թողնով մինչեւ մի»: Որովհետեւ Պարսից եւ Օսմանցոց մէջ երկարատեւ եղան կռիւները, կարելի է այնպէս իմանալ Դարանաղցոյ եւ Յակոբ Կարնեցոյ խօսքերը, թէ յընթացս 1630—1638 տարիներու տեւեցին գերեթափութեան աշխատանքները, երբ Սանոս ազգասիրաբար բերաւ իր մասնակցութիւնը ի նպաստ թշուառներու:

Բացի այս բարեգործական եւ ազգասէր գործունէութենէ, բարի անուն թողուց Սանոս Չէլէպի ի Կարին իր եկեղեցասիրութեամբ: Ինչպէս Հալպպի մէջ Ս. Քառասուն Մանկունք եկեղեցին պայծառացուց, նոյնպէս ի Կարին նորոգեց Բերդի Սուրբ Ստեփանոս եկեղեցին, որուն համար կը գրէ Յակոբ Կարնեցի (էջ 34). «Իսկ իշխանն այն Սանոս, եկեղեցի մի կայր ի մէջ բերդին, որ տուն եւ սարայ էր տաճկի միոջ. առեալ դրամով գտունն հանդերձ եկեղեցեաւն եւ ետ Հայոց. եւ ի հասանել ՌՁԹ թվին (1637) քանդեալ աւերեցին դսարայըն. մեծ եւ փոքր, քահանայք եւ ժողովուրդք ջերմ սիրով շինեցին մեծ փայտեայ ժամատուն. եւ բազում դրամ մսխեցին ի դրունս փաշաներացն. եւ լինէ՛ր յարժամ փառարանութիւն Աստուծոյ սաղմոսերգութեամբ եւ պատարագօք»:

Ս. Ստեփանոսի նորոգութեան մասին նոյն իմաստով կը խօսի նաեւ ուրիշ յիշատակագիր մը⁵, պատմելով զէպքը այսպէս. «Սուրբ Ստեփանոս եկեղեցին, որ էր էրզրում ի մէջ բերդին, թօփխանին եւ ամպարներուն ցածն, սրբաչէն՝ բազում ժամանակաւ էր ամայի եւ աւեր, չուրջանակի տնել էլին շինեալ: Աջողութեամբն Աստուծոյ լի թուին Ռ-ՀԹ Հալպպի Սոճայ Սանոսն եկեալ տեղս էմին եւ կոմրուկչի եղեալ. եւ այլ տեսեալ գեղեղեցին սէր եւ գութ շարժեալ. չուրջ եղեալ տներն եւ սարայներն ստացեալ էր եւ ինքն մէջն բնակէր. եւ հրաման առեալ սուլթան Մուրատէն եւ նորոգեաց գեղեղեցին՝ յորժամ եկեալ էր Երեւանայ բերդին վրայ եւ ութ օրն առեալ էր զբերդն. եւ շինեաց եւ նորոգեաց գեղեղեցին, ժամատնովն եւ խցերով եւ սրահով, ամենայն ինչ յարմար շինեալ: Եւ Փիլիպոս կաթողիկոսն յայնժամ ի տեղս հանդիպեալ՝ եպիսկոպոսն ժամանա-

⁵ Չեռագիր Թ. 1355, Վենետիկի Միքիթ. Մատենադարանի (Բժշկարան Սաֆարայ), հրատ. Դոկտ. Վ. Թորոսեան, Բ. ազգ. մ. վ. է. պ., 1925, էջ 138—137:

կին եւ գեղեղեցին նայ է օրհներ եւ օծեր, թվին ՌՁԹին (1637) եւ զառաջին մկրտութիւնն Պետրոս չարապին է մկրտած: Եւ յետ ժամանակաց ի թվին ՌձԹԱին ի ծովացեալ մեղաց մերոց նախանձեցան Տաճիկքն եւ հրաման բերին սուլթան Մուհամմատէն եւ առեալ գեղեղեցին աւերեցին. եւ սրահի տեղն մէսչիթ շինեցին. եւ եկեղեցու տեղն աւեր մնաց մի կողմն, իբրեւ գործ ի մէջ տան եւ եղեւ մեղբազում կսկիծ եւ մնաց ժամանակ ինչ այնպէս: Եւ յետ ժամանակաց զօրացաւ Ֆէյզուլահն⁶ եւ դնաց ի մեծ քաղաքն եւ անդ մեծագոյն փառաց եհաս. եւ առաքեաց Ֆէրման որ շինեն մեծ ճամի. եւ արշտակեցին եւ տուն մեր եւ քանդեցին» (թերի կը մնայ):

Մանրամասնութիւնները, որոնք կը հարողուին եկեղեցոյ մզկիթի վերածման մասին, գիտէ նաեւ Յակոբ Կարնեցի (էջ 35). «Իսկ ի հասանել Ռձ թվականին Հայոց եկն երկրէն Վաֆայ մօլլայ մի վանի անուն ճարտասան եւ յոյժ հմուտ զուռանին եւ բողոք նոցին: Եկն ի քաղաքս Արզրում. եւ համբաւ նորա ընդ ամենայն երկիրս Տաճիկաց... որ իմացեալ վէզիրն եւ տարաւ Ստամպոլ... Եւ մօլլայս այս յամր էառ թաւաւորէն եւ առաքեաց ի վերայ փաշային Արզրումայ. եւ առին գեղեղեցին որ ի մէջ բերդին՝ անուն սրբոյն Ստեփանոսի, եւ արարին մզկիթ. եւ եղեւ սուղ մեծ ազգիս Հայոց»:

Սոճայ Սանոս թէ ո՛րչափ մնաց ի Կարնոյ Սանոս թէ ո՛րչափ մնաց ի յիշատակարին, չեն ակնարկեր վերոյիշեալ յիշատակարները. Յակոբ Կարնեցոյ խօսքն թէ Սանոս «վարեաց զիշխանութիւնն որչափ եկաց շատ անորոշ է. բայց կը յայտնէ թէ նա մնաց ի Կարին մինչեւ իր կեանքին վերջը: Մահուան տարին կ'երեւայ թէ պէտք է համարել 1640էն ետքը:

Տրդատ եպ. Պալեան տեսած է ի Կեսարիա Դոկտ. Ստեփան Գալթաղեանի մօտ Աւետարան մը, որ հետեւեալ Յիշատակարանն⁷ ունի, գրուած 1632ին.

⁶ Սէյիդ Ֆէյսուլահն էֆէնդի, Մուստաֆա Բ. ի վարպետը, 1688 Փետր. 10ին ընտրուեցաւ մուֆթի (19 օր միայն). երկրորդ անգամ 1695ին. հմտ. Hammer, Geschichte des osmanischen Reiches, III, էջ 934:
⁷ Տրդատ վ. Պալեան, Յուլիան Հայերէն ձեռագրաց Ս. Աստուածածին եկեղեցոյն ի Կեսարիա. Կ. Պոլիս 1893, էջ 63 [Յուլիան Հայ. ձեռ. ի թուրքերէ, Հատոր Ա, տետր Բ.]:

«Փառք արարչին ամենայնի, Տացէ դհայցուածքն խնդրողի, Լիակատար եւ անթերի. ձօնս եւ փարթամ շնորհաւք ի լի: է եւ կտակս նորակի Աստուածաշունչ եւ ցանկալի. Իմաստութեամբ ուրախ լինի, Յորդահոսեան գետիւ բղխի: Բարեհամ նիւթոյս նա զովացի, Սորա ցանկաց ըզձամբ սրտի Եւ ստացաւ նահանգն Կարնի. ՌՁԱ. թրւականի վերածայնեալ Սանոս Չալպպի. Եւ կենակցոյն իւրոյ ի նմի Որ եւ տեղեալ Հալպպեցի. Նաեւ որդոյն ընթերցողի⁸, Իսկանդար չարապի վերածայնի. Եւ ծնողացն մահապաի, Որ Ղարակաւզ անուանի. Քանդի եւ մայրն է մահապաի, Որ վարդխաթուն վերածայնի: Եղ յիշատակ անանցելի, Իւր իւրայնոցն ամենայնի. Եւ միարան արու զարմի, Եւ որ փափակէ ողորմայի, Փոխեցելոյն ի տար երկրի. Ըղձիւ ասցէք Տէրն ողորմի. Մայրաքաղաքն ի Բերայի, Յայժմիկ Հալպպ հռչակեալ լինի, Չի եւ ի դուռն Ս. Քառասնի, Քանդեալ⁹ եղաւ յիշատակ ամենայնի: Արդ աղաչեմ ընթերցողքդ ամենի, Արժան անէք յիշման սրտի, Չոր եւ գթած Տէրն ամենի, Չեղ յիշողացդ ողորմեցի, Մեղ յիշողացդ միարանի, Եւ ամենայն ցանկացողի, Պարգեւաւք առատ ողորմեցի. Չեր պարգեւացն եւ անթերի, Տացէ զփառսն անճառելի, Ստացողի այսմ վերջի, Ամէն եւ է եւ եղիցի. ամէն:

Հայր մեր որ... Կրկին աղերսիւ Հայցեմ ի ընթերցողացդ յիշել ի Տէր |||| (թուղթ ինկած): Չեռագիրը, ուր կը գտնուի այս ոտնաչափ յիշատակարանը, երկմասնեայ է. առա-

⁸ Տպ. ընթերցալի:
⁹ Իմացիք՝ Քանդակեալ:

Ջին մասը կը կազմէ քաղաքայ Աւետարան մը (թղ. 1—167), որուն գրութեան գրիչն ու տարին անծանօթ կը մնայ. երկրորդ մասը (թղ. 168—358) գրուած է մագաղաքի վրայ եւ կը բովանդակէ Գործք առաքելոցն եւ Թուղթերը, ունի յիշատակարան, որուն համաձայն գրիչն է Թորոս սարկաւազ, տեղը՝ Մեծքար, ժամանակը 1274: Ա. եւ Բ. մասերն ալ գրուած են «ընտիր բոլորգրով» եւ ունին նկարներ եւ նկարազարդեր: Դժբախտաբար Պալեան չէ հաղորդած թէ ո՞րքան նմանութիւն ունին իրարու հետ Ա. եւ Բ. մասերու գրերը, յատկապէս թէ Ա. մասի գրչութիւնը նո՞յնպէս ընտիր է եւ հին ինչպէս Բ. մասինը: Բազմալի էր մասնաւորապէս տեղեկութիւն Ա. մասին վերջը գտնուած «Յիշատակարանին» գրչութեան նկատմամբ: Աւետարանի գրչի՞ն գործն է այն: Շատ կասկածելի է այս պարագան: Յիշատակարանէ աւելի յիշատակագրութիւն պէտք է համարել զայն. որովհետեւ ստացիւն Սանոս կը ստանայ Աւետարանս ի նահանգին Կարնի եւ կը դնէ յիշատակ ի դուռն Ս. Քառասնի ի Հայկեայ, ուր եւ «քանդեալ եղաւ յիշատակ ամենայնի», այս ինքն արձանագրուեցաւ նուիրման յիշատակագրութիւնս: Ո՞վ է տողերու գրիչը. կը պակսի ամէն տեղեկութիւն: Բայց ուշագրութիւն կը գրաւէ այն պարագան որ ճիշդ այս տարի՝ 1632ին՝ նուիրուած է Ս. Քառասնից նաեւ խոճայ Պետրոսի, Սանոսի եղբոր Աւետարանը, յիշատակագրութեանս շատ նման — նոյնպէս ոտնաչափ — ընծայականով մը: Երկու գրիչներու նոյնութիւնը ակնբախ է: Բայց նաեւ վերջնոյ յիշատակագիրը անծանօթ կը մնայ: Երրորդ ձեռագիր մը՝ Երուսաղէմի Թ. 23 Հարանց վարքը, գրուած 1625ին Հայկեայ Լեհացի Մկրտչի ձեռքով, եւ նուիրուած Ս. Յակոբեանց Սքանդար չէլչպիի կողմէն, թերեւս բանալի ծառայէ այս առեղծուածին: Կան տողեր Սանոսի աւետարանին եւ Սքանդարի Հարանց վարքի յիշատակագրութիւններու մէջ, որոնք իրենց բառական նմանութեամբ աչքի կը զարնեն, է մէջ այլոց ուշագրաւ է տողս

Եւ կենակցոյն իւրոյ ի նմի

որ երեքին մէջ ալ կը տեսնուի. Երուսաղէմի օրինակն ունի՝

Եւ կենակցոյն իւրոյ նմին:

Գիտենք որ Մկրտչի Լեհացի Հայկեայ կը գտնուէր դեռ 1635ին: Իրեն կը պատահինք յետոյ՝ 1653ին էջմիածին:

Յիշատակագրութեանս մէջ երկու կէտ ուշագրութեան արժանի են. նախ որ լուծած է խոճայ Պետիկի, Սանոսի եղբոր անունը, մինչ անոր հայրն ու մայրը կը յիշուին. եւ դարձեալ խօսք կ'ըլլայ վախճանեալի մը մասին, որուն անունը կը լուսի.

Փոխեցելոյն ի տար երկրի
ըզձիւ ասէք Տէր ողորմի:

Որո՞ւն մասին է հոս խօսքը: Խոճայ Պետիկի համար կ'ըսուէր, թէ Սուլտան Մուրատի հրամանաւ գլխատուած ըլլայ. խորհրդաւոր լուծիւնը անոր անունն եւ դարձեալ «ի տար աշխարհ փոխեցելոյն» նոյնքան խորհրդական ակնարկութիւնը հաւանական կ'երեւցնեն խօսքը Պետիկի մասին իմանալ, քանի որ Սանոս 1637ին դեռ Կարնի էր, ուր Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ կառուցման հրամանը կը հանէր եւ 1638ին գերեթափութեան կ'աջակցէր:

7. ՍՊԱՆԿԱՐ ԶԵԼԵՊԻ

Սքանդար անդրանիկ որդին էր Սանոս չէլչպուոյն: 1624ին կը ներկայացնէ զինքը վարդան Լեհացի իբրեւ «հանձարեղ եւ գեղապաճոյճ, լուսանկար, ծաղկաթիթիթ, իմաստուն պատանի, պանծալի Սքանդար չալապի». իսկ Մկրտչի Լեհացի՝ «աստուածասէլ եւ բարեմիտ, հեղահոգի, հիւրընկալ եւ աղքատասէր, առատաձեռն եւ ողորմած եւ գրասէր Սկանդար չալապի»:

Ուշագրաւ է իր «գրասէր» յորջորջումը, զոր 1632ի յիշատակագիրը՝ «ընթերցող» կը թարգմանէ. այսինքն Սկանդար ուսած է՞ր հայերէն եւ եղած գրասէր:

Զգիտենք թէ ի՞նքն ալ ընկերացաւ 1627ին իւր հօրը՝ Սանոսի, երբ սա իբրեւ մաքսապետ փոխագրուեցաւ Կարնի:

Սկանդար չէլչպի կը գովուէր ժամանակակիցներէն իւր իմաստութեան, յատկապէս գրասիրութեան եւ ընթերցողութեան պատճառաւ: Ժամանակը հասցուցած է մեզի երկու ձեռագիր, որոնց ստացողն եղած է Սկանդար. այսպէս 1625ին ստացած է եւ

ապա նուիրած Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքին Հարանց վարք մը, գրչութեամբ Մկրտչի Լեհացւոյն: Յիշատակարանն¹ է.

Փառք... յոյս ունիմք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, զի բարեխօս ունելով զսուրբ Լիւյն Մարիամ եւ ըղսուրբ Հարանցն զձգնութիւնն եւ զաղօթքն առ միածին բանն Աստուած, զի ողորմեցի իւր բազում ողորմութեամբն ամենայն հաւատացելոց. մանաւանդ ստացողի սուրբ գրոցս Սկանդար չալապուն, որ ետ գրել զսա իւր չալալ արդեամբն յիշատակ իւր եւ հօրն իւրոյ պարոն Սանոս չալապուն եւ մօրն Շահմէլիք խաթունին եւ մեծ հօրն մահապի Կիրակոսին եւ մեծ մօրն մահապի վարդիսաթունին եւ հօրեղբարցն խոճայ Պետրոսին եւ մահապի Շահաւաթին եւ Սահակ չալապուն եւ քրեւրցն ամենեցուն եւ ամենայն արեան մերձաւորացն: Եւ որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշուաց եւ մեզ յիշեցելոցն ողորմեցի աստ եւ ի հանդերձեալն իւր միւսանգամ դալստեանն. ամէն:

Արդ եւ ես նուստ եւ անարժանս, վատթար եւ տրուպս մէջ ամենայն գրչաց, որքէ Քրիզոստի Լեհացի Մկրտչիս, որ թափուր եմ եւ անպտուղ եւ ունայն ամենայն բարեգործութեան, սկսայ զայս սուրբ գիրքս բանալի արքայութեան, որ կոչի Սրբոց Հարանց վարք, ի լաւ եւ ընտիր օրինակէ, ի թվակալութեան հայ տուժարի Ռէշի (1625) ամի է մարտ ամսոյ Բ: Եւ եղեւ աւարտումն սորա ի սոյն ամի հոկտեմբերի ԻԶ, յաշխարհիս Արարացւոց ի մայրաքաղաքն Բերիա, որ այժմ կոչի Հալապ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի եւ Սրբոց Քառասնից եկեղեցեաց: Եւ կատարեցաւ սա ի գուարճութիւն տեսողաց եւ ի փառս Աստուծոյ, ի բունակալութեան Տաճկաց աշխարհին Հոռոմոց Սուլթան Մուրատին որդւոյ Սուլթան Ահմադին, եւ ի թագաւորութեանն Կիւլիկոյ հայաստան, ի կաթողիկոսութեանն Սրբապետ Կաթողիկոսի Սրբապետին Միքայիլ Սրբապետին, որ լուսանալ քաջ բարունապետին Միքայիլ Սրբապետին կոչի Քաղաքս, եւ սուրբ Երրորդ Չամայ արհիեպիսկոպոսութեանն Տէր Գրիգոր Ղարանցւոյ, զոր Տէր Աստուած մեր շնորհեցէ մեզ ընդ երկայն աւուրս: Նաեւ զմիշ-

մանն արժանին կրկին անգամ հայցեմք եւ ինդրեմք ի ձէնջ վայելողք սուրբ գրոցս ի բերանով եւ առատ սրտիւ ողորմի ասացէք եւ մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սուրբ գրոցս աստուածասէր եւ բարեմիտ, հեղահոգի, հիւրընկալ եւ աղքատասէր, առատաձեռն եւ ողորմած եւ գրասէր Սկանդար չալապուն եւ հօրն Սանոս չալապուն եւ ամենայն արեան մերձաւորացն: Նաեւ զիս զանարժանս, որ փտեալս եմ ի գերեզմանի, զԼեհացի Մկրտչիս եւ զհայրն իմ Գրիգոր եւ զմայրն իմ Եղիսարեթ եւ զամենայն ազգաւորսն իմ յիշել ի Տէր եւ մեղաց թողութիւն տոհմն իմ յիշել ի Տէր եւ մեղաց թողութիւն խնդրել եւ սղալանաց եւ խոչորութեան գրիս անմեղաղիր լերուք, քանզի կամաւս չարի, անմեղաղիր լերուք, քանզի տնանկութիւն, օտապլ յակամայ, քանզի տնանկութիւն մարդոյ զխելքն լուծիւն եւ պանդխտութիւն մարդոյ զխելքն եւ զաչիչ լոյսն կու տանի, վասն այդ պատճառին համար հայցեմ ի ձէնջ, ով սուրբ ընթերցողք, զոր տեսնէք զթերին լուք եւ զաւելին ջնջէք եւ անարժանիս ողորմի ասագաւելին ջնջէք եւ անարժանիս ողորմի ասագաւելի եւս առաւել Սկանդար չալապուն որ ցէք, եւս առաւել Սկանդար չալապուն որ բազում երախտիք եւ խնամք եւ գութ ունէր ի վերայ մեղաւոր գրչիս, զոր յոյս ունիմ եւ ինդրեմ ի Քրիստոսէ որ իւր երախտեացն փոխարէն աստ միոյն հաղարադատիկ եւ բիւրապատիկ հատուցանէ եւ անդ գերկնից արքայութիւնն վայելել տացէ իւրն հանդերձ ծնողք իւրովք եւ ամենայն ազգատոհմովք:

Յիսուս Քրիստոս Հօր գորութիւն,
Որք զօրացան պատերազմին,
Բամբասանաց ի զատ կացին,
Ի զուր գեղբայրսն ոչ զատեցին:
Սոցին մաղթանքն առ քեզ լիցին,
Զի եւ զթած է կամք քոյին,
Թողցես զպարտսն ստացողին,
Արժան անես մասից նոցին:
Վարք սուրբ հարանցս հրաշալին,
Ստացաւ ըզմամբ սրտիւն ի լին,
Վերոյ ձայնեալ Սկանդար չալապին,
Զի փափաքեաց այս մատենին:
Եզ յիշատակ անջնջելի,
Իւր հոգւոյն եւ ազգատոհմի,
Հօրն իշխան Սանոս չալապուն,
Եւ կենակցոյն իւրոյ նմին:
Հանդուցեալ ծնողացն մահապսին,
Որ Ղարաիօղ նմա ձայնին,
Այլ եւ մեծ մօրն մահապսին,
Զի վարդիսաթուն նրա կոչին:

¹ Չեռագիր Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մատենադարանի Թ. 23, Հարանց վարք: Արատապղ եպիսկոպոսի խնդրանք հաճած է արտագրել Մկրտչի եպիսկոպոս Եղանեան, որուն կը յայտնուի այս տեղ հրապարակաւ չնորհակալութիւն:

